



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Կ.Եղեգիս, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 219 Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 53-րդ, 55-րդ մասերի պահանջները, քաղաքացու դիմումը

*որոշում էմ՝*

1. Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրում սեփականատեր քաղաքացի Արփիկ Նորայրի Գալստյանի սեփականություն հանդիսացող բնակարանին /վկայական՝ 2776666, կադաստրային ծածկագիր՝ 10-041-005-001-003-8, մակերեսը՝ 70ք/մ/ տրամադրել Եղեգիս համայնք, Վարդահովիտ բնակավայր, փողոց 8, շենք 7, բնակարան 8 հասցեն:
2. Չեղյալ համարել նախկինում տրված Վայոց ձորի մարզ, գ. Վարդահովիտ փ. 8, բն. 13 հասցեն:
3. Սույն որոշման ենթակա է գույքային իրավունքի պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 14  
Կ.Եղեգիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Կ.Եղեգիս, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 220 Ա

**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, Վայոց ձորի մարզպետի 14/10/2020 թվականի N01/07.2/6688-2020 գրությունը և ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

**որոշում եմ՝**

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական տարածքի փողոց 19, փկղ. 2, թիվ 18 հասցեում գտնվող քաղաքացի Ագնեսա Լյուդվիգի Հակոբյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի /վկայական՝ 18032020-10-0022, կադաստրային ծածկագիր՝ 10-035-0008-0005, մակերեսը՝ 0,006հա/ գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**



2020 թ. հոկտեմբերի 14  
Կ.Եղեգիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵՂԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեղիս համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ.Եղեղիս, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 221 Ա

**ԴԱՏԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՎՃՌՈՎ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶՎԱԾ ԳԵՌՊԳԻ ԲԵՆԻԿԻ  
ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՄԱՅՈՂ ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆԸ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով 02/08/2013թ. քաղ. գործ. թիվ ԱՎԴՅ/0067/02/12 վճիռը, 2020թ. հոկտեմբերի 22-ի Եղեղիս համայնքի ինամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը

*որոշում եմ՝*

Տալ համաձայնություն դատարանի օրինական վճռով անգործունակ ճանաչված Եղեղիս համայնքի Եղեղիս բնակավայրի բնակիչ Գեորգի Բենիկի Պողոսյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողը /կադաստրային ծածկագիր՝ 10-021-113-036, մակերեսը՝ 0.123հա/ նրա հոր՝ Բենիկ Մարտիրոսի Պողոսյանի կողմից օտարելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**



2020 թ. հոկտեմբերի 23  
հ.Եղեղիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Կ.Եղեգիս, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 222 Ա

16-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 204Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով

**որոշում եմ՝**

Եղեգիս համայնքի ղեկավարի 16-ը սեպտեմբերի 2020 թվականի «Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Ռեհան Հմայակի Սարգսյանի սեփական տնամերձ հողամասին հասցե տալու մասին» թիվ 204Ա որոշման մեջ «Հմայակի» բառը փոխարինել «Համայակի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 23  
Կ.Եղեգիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ. Եղեգիս, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 223 Ա

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

*որոշում եմ՝*

Տալ շինարարության թույլտվություն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին Եղեգիս բնակավայրում փոքրաքանակ երեխաներով համալրված տիպային /մոդուլային/ միջնակարգ դպրոցի կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 23  
հ. Եղեգիս